

ցած են, ինչպէս կը տեսնուի անոնց համեմատութենէն (Փորթ. 468-71):

Արդ՝ մեր Գլակայ վանականաց համար եւս կը կարդանք՝ թէ «միաձաշակս» էին (Մամ. 9): Աւելի վերջ՝ ի Սիւնիս անուանի թանահատի խստամբեր միանձունք դեռ «յաւուրն մի ակգամ» կը ճաշեն (Որբ. 116): Նոյնը կը գտնենք ակնարկուած նաեւ Նարեկացւոյն կողմանէ (Կարգ աղ. 419): Ժ դարուն Հայոց մէջ կը հիմնուին զանազան մենաստաններ, որոնք մի եւ նոյն կանոնն ունին՝ չուտելու ոչ միրգ եւ ոչ բանջարեղէն «նախ քան զհասարակաց սեղանն», որ մի միայն է (Ասող. 176): Եւ ժ. դարուն երուսազեմացին Վարդան արեղայ կը խրատէ տակաւին «յաւուրն մի ակգամ» կերակուր ուտել (Վլդ. Խր.): — Միաճաշակութիւնս՝ յիշուած ի գովեստ ոմանց, եւ ի յորդոր կամ ի պատուէր այլոց, չի կրնար ուրեմն միակ սովորոյթն եղած լինել հայ կրօնաւորաց. այլ կային, եւ հաւանօրէն ժուժկալներէն ալ բազմութիւ, որ իրենց ստամոքսին աւելի խնամ կը տանէին:

2. - Ժամ կերակրոյ: — Մի անգամ ճաշողաց յատուկ ժամը նոյն էր աշխարհականաց ընթրեաց պահուն հետ. այսինքն՝ «իբրեւ կրկոյ լինի» (Ոսկ. Թղթ.